

թիւ Ինքնակալ ԿԱՅՄԱՌԻՆԵՑԱԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՆ.

(Նոր-հինգիս).

4) Մեր ազգի մէջ մատու նաեւ հնդկական տարրեր: Ա. Վաղարշակի օրով Հնդկաստանից Հայաստան եկան մի խումբ դադթականներ. սոցա մասին այսպէս է պատմում Օհնոր Գլակը. «Գեմետր և Գիւսանէ իշխանք էին Հնդկաց և եղբարք ցեղով. և փախուցեալք ի Թագաւորէն Հնդկաց՝ հալածեցան և եկին մինչև աշխարհս Հայոց: Աւ իբրեւ եկին առ Թագաւորն Հայոց Վաղարշակ՝ ետ նա զերկիրն Տարօնոյ ընդ իշխանութեամբ նոցա, յորում շինեցին քաղաք և կոչեցին Վիշապ. որք երթալ յԱտիշատէ (յԱշտիշատէ)՝ կանգնեցին զկուռն զայնոսիկ որք ի Հնդիկս պաշտէին, 38): Թեպէտ Օհնորի խօսքերից այնպէս է երևում որ իբր միայն երկու իշխանք եկան Հնդկաստանից Հայաստան, բայց շատ դժուար է ընդունել որ սոքա արդարեւ միայնակ լինէին: Իբրեւ իշխանք կամ ցեղապետք՝ փախելով իւրանց հայրենիքից ապստամբութիւն ցոյց տալու համար հալածուած լինելու պատճառով, նոքա չէին կարող թողնել իւրեանց ընտանիքը և մերձաւոր ազգականները: Ինքն Օհնոր նոյն երեսի վերայ վկայում է որ Գեմետր և Գիւսանէ իշխանները բերած ունէին իւրեանց հետ և իւրեանց երեք որդիքը՝ Կուռ, Մեղտես և Հոռեան. «Աւ յետ հնգետասան ամի հսպան Թագաւորն (Վաղարշակ) զերկոսեանն (զԳեմետր և զԳիւսանէ) և զտեղիսն իշխանութեան ետ որդւոց նոցա

Կուռայ և Մեղտեսայ և Հոռեայ, 39): Հաւանական է կարծել որ Հնդկաստանցի իշխանները բերին իւրեանց հետ և իւրեանց ցեղը կամ տոհմը, կամ գոնէ բազմաթիւ մարդիկ, մանաւանդ որ շատ դժուար էր անցնել այնպիսի երկարատեւ ճանապարհ առանց պահապանների, առանց զօրութեան: Այս կարծիքի հաստատութիւնը տեսնում ենք Օհնորի հետեւեալ խօսքերի մէջ, «Աւ յետ ժամանակաց խորհուրդ առեալ Կուռաս և Մեղտես և Հոռեան՝ ելին ի լեռն Քարբէ, և տեսեալ զայն տեղի զի ընդարձակութիւն էր որսոյ, և հովաքեր խոտոց, և փայտի առատաձեռն, շինեցին զնա դաստակերտ. և կանգնեցին ի նմա երկուս կուռս՝ զմինն յանուն Գիւսանեայ և միւսն յանուն Գեմետրեայ, և ետուն ի սպասաւորութիւն նոցա «Կապէն Էրեանց, 40): Աթէ խօսքերս — «Կապէն իւրեանց, — չէ կարելի հասկանալ իբրեւ մի ամբողջ ազգ, գոնէ կարող ենք հասկանալ իբրեւ բազմաթիւ ժողովուրդ եկած Հնդկաստանից իւր իշխանների հետ: Այլեւի սոցա բազմութեան պատճառով Վաղարշակը տուեց Գեմետր և Գիւսանէ իշխաններին ամբողջ Տարօնի դաւաճը. երեւի նոյն պատճառով այս երկու իշխանքը և յետոյ նոցա որդիքը ստիպուեցան քաղաքներ և աւաններ շինել: Օհնորը յիշում է նոցա անունները և ցոյց է տալի նոցա բնակիչների թիւը. «Բանգի Կուռասունի երդ համարս ՕՆՃԻԻ (612) և հեծեալս ՌԵԼ (1030) և տումբ (տամբ) ծուխս

(39) Օհնոր, եր. 68—69.

(40) նոյն, եր. 69.

(58) Օհնոր Գլակ, ի Կ Պօլիս, 1719, եր. 68.

ԹՆՂՂ (900) և հետևակա ԲՈՒ և երկե-
րիւր (2,200) : Մուշ և Մեղաի ունի
ծուխս ԲՈՒԼՆՂՂ (2,700) և հետևակա
ՈՒԼ (1030) : Խորնի (41) ունի ծուխս
ՈՒՅԱՌ (1906) և հեծեալս ԼՆՂՂ (700)
և հետևակա ՈՒԼՆՂՂ (1700) : Իսկ Բրեխ
ունի ծուխ (ծուխս) ՈՒՂՂՂ (1180) և
հեծեալս ութ ՂՂ (800) և հետևակա Ռ
հարիւր (600) : ԼԵԼ Բուզու ունի ծուխս
հինգ հարիւր (500) . . . , 42) : Բոլոր
ծուխները միասին են 7186, իւրաքանչիւր
ծուխի մէջ եթէ համարենք ամենասակա-
ւը երեք հոգի՝ բոլոր բնակիչների թիւը
կլինի 21558 : Մենք չենք կամենում ա-
սել որ Հնդկաստանցի իշխանները իւր-
եանց հետ բերին այսքան բազմութիւնը,
այլ կամենում ենք հաստատել որ միայ-
նակ չէին և ունէին իւրեանց հետ բաւա-
կանին շատ մարդիկ, որոնք հետզհետէ ա-
ճեցան և բազմացան :

Հնդկաստանցի գաղթականները բերին
իւրեանց հետ և իւրեանց հնդկական կրո-
նը, իւրեանց քաղաքներում և գիւղերում
չինեցին նոքա մեհաններ Ղեմետր և Գի-
սանէ կուռքերի համար և կարգեցին քըր-
մեր և պաշտօնեաներ : Հայերը անձանթ
լինելով հնդկական դէնի և նորա ծեսերի
և արարողութիւնների հետ՝ ի հարկէ
չէին կարող վարել քրմերի պաշտօնը, ու-
րեմն այդ քուրմերը պէտք է լինէին ան-
պաշտօն նոյնպէս Հնդիկներ : Ինքն Օհ-
նորը վկայումէ այս իբրև ականատես.

(41) Խորնի կամ Խորեն — այստեղացի էր Մով-
սէս Խորենացին, ուստի և կոչուած է Խորենացի.
արդեօք հնդկական էին Խորենացու ծագումն.

(42) Զենոր, եր. 71.

“Ե՛ւ և յոյժ զարմանալի իսկ էր տեսիլ
նոցա (քրմաց), զի սեաւք էին և զիսա-
ւորք և զազրատեսիլք, զի ցեղով է Հնդ-
կացիքն, (45) : Ե. Վ. զաղարշակից մինչև
սուրբ Գրիգոր Լուսաւորիչը անցել էր
համարեա 450 տարի. եթէ Հնդկաստան-
ցի գաղթականները բազմութիւ չլինէին և
չունենային իւրեանց հետ և իւրեանց կա-
նայքը, այսպիսի երկարատե միջոցում
չէին կարող նոքա անփոփոխ պահպանել
իւրեանց յատուկ հնդկական սե գոյնը և
գծերը, այլ օղի և կեանքի ներգործու-
թեամբ և մանաւանդ խառնուելով ամուս-
նութեամբ տեղական բնակիչների հետ՝
պէտքէ անպատճառ փոխակերպուէին և
նմանութիւն ստանային տեղական բնա-
կիչների հետ :

Հնդիկ գաղթականները այնպէս շատէին
և մանաւանդ հետզհետէ այնպէս շատացան
որ ոչ թէ դժուարութեան ենթարկուեցան
հայկական կեանքի ազդեցութեան տակ,
այլ և ինքեանք ունեցան ազդեցութիւն
Հայերի վերայ : Նոցա դէնը այնպէս շուտով
տարածուեցաւ և բնիկների մէջ և այն-
պէս շատացան այս հնդկական կրօնի դա-
ւանողները, որ երբ Լուսաւորիչը վերա-
դառնումէր Ասարիայից իբրև հայրապետ
բազմութիւ իշխաններով և մեծագու-
մար զօրքով, բերելով իւր հետ սուրբ
Յովհաննու Արարպետի և սուրբ Եթա-
նադիսէի մատուցները, սոքա, հնդկահա-
ւատները, իւրեանց քրմերի առաջնորդու-
թեամբ բացարձակապէս պատերազմեցան
Հայոց իշխանների և զօրքի դէմ, հա-
ւաքուելով մինչև 7000 մարդ, և չէին կա-

(45) Զենոր, եր. 68.

մենում թոյլ տալ որ Ղուսաուորիչը քանդէր նոցա մեհանները: Թէպէտ սոքա յաղթուեցան, թէպէտ Ղուսաուորիչը քանդեց և կործանեց նոցա մեհանները և արձանները, և նոցա տեղ շինեց այն սուրբ կարապետի վանքը, որը մինչև այժմ երևելի ուխտատեղի է Հայոց համար և կոչում է Մշու սուրբ կարապետ, բայց այնու ամենայնիւ շուտով չվերջացաւ հրնդկական դէնը: Սորա դաւանողները սովորութիւն ունէին գերծել բոլոր գլուխը և միայն կառափին կամ գանգի վերայ թողնումէին մի երկար ծամ: Ահամայ կամօք ուրանալով իւրեանց կրօնը և ընդունելով քրիստոնէութիւնը՝ նոքա հոգով և սրտով դարձեալ մնումէին հաւատարիմ իւրեանց կրօնին, և իբրև նշան իւրեանց այդպիսի հաւատարմութեան՝ պահպանումէին գլուխը գերծելու և երկար ծամ թողնելու կրօնական սովորութիւնը և քրիստոնէութեան ժամանակ: Չհնոք Գլուխը ասում է. «Աւ Գիսանէ զի զիսաւոր էր, վասն այնորիկ և պաշտօնեայք նորա դէսս ունէին. զի յորժամ ի Վրիստոս դարձան՝ ոչ էին կատարեալ ի հաւատս և զհայրենի օրէնսն չիշխէին յայանի ունել, ապա խաբէութեամբ զայս հնարս իմացան՝ ծամ թողին ի գլուխս մանկանցն, զի զայն տեսեալ յիշեսցեն զառաջին պղծութիւն իւրեանց: Որ և ես աղաչեմ զգոյշ կացէք, զի մի և ի ձերում երկրիդ սերմանիցի, 44): Ահա այս սովորութիւնը՝ գերծել գլուխը և թողնել միայն մի ծամ իսկ և իսկ գանգի վերայ՝ մնացել է մինչև այսօր Վանայ և մերձաւոր գաւառների բը-

նակիչների մէջ. շատերից շատ անգամ հարցրել եմ ես այդ սովորութեան պատճառը կամ բացատրութիւնը, բայց միշտ լսել եմ մի և նոյն պատասխանը—թէ ինքեանք չեն իմանում պատճառը, այլ այսպէս մնացել է իւրեանց նախնիքներից:

(Մատեն Է Երեսնայն):

Վանայի Վարդապետ Բասթաթեան.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԹԱԳԱՆՈՐԻ ՎԱՆԱՅԱՆԸ

(Նախնական):

Վարդապետ Բ.

ԵՐՈՒԱՆԻ, ԵՐՈՒԱՋ ԵՒ ԱՐԳԱՄ
Երուանդ:

Բարեաւ եկիր իմ յարգելի քաջ Արգամ,
Վերադարձանք փթիկաւ ծաղիկ անթաւամ,
Ինչու այդպէս վաղ ձգեցիր գինեբրուք,
Ձը կեցար մինչ արքայն կոչէր պարերգութիւն,
Արգամ

Ես չունէի այսօր փափագ պարերգուաց.
Ինչպէս որ դու չկեցար ցլերի գինեբրուաց,
Կը զգո՞ւիմ երբ ուրախութեան հացիկբոյթ,
Կուտայ շուտ շուտ անարգութեան երևոյթի:
Երուանդ:

Անարգութիւն նա միայն իմ գէմ կանէ,
Իսկ քեզ, կամ այլ նախարարաց կը պատուէ,
Ով չը գիտէ թէ մեր մայրը այր չունէր,
Ինչու պիտի այդ դէնք շինէր ընդդէմ մեր,
Երուանդ:

Ես դարձեալ իմ ասածս պիտի երկրորդեմ,
Երթալ պէտք է մէկ այլ երկիր տարագէմ,
Թող վայելէ արիւնջադախ աթուր,
Ես դիցական պատիւ ձոնէ իւր հօրը,
Արգամ:

Ով էտեսել նորա հօրը կամ մօրը.
Որոյ կին էր Արգարու այն մէկ քայրը.
Աւանդութիւնք բազմագիմի կը պատմեն.
Բայց ուր դառնաս զորոս ծնողք յայտնի չեն.
Արշակունեաց սովորական ժեսերով (1)

(1) Վաղարշակի դրած օրէնքն էր, որ միայն ժառանգը կը մնայր հօր մօտ: